ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 08 - Ա

« 13 » ՀՈՒՆՎԱՐ 2023Թ.

ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշմամբ հաստատված 4-րդ հավելվածի 6-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման գործընթացում միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության արժանացած ծրագրերով կատարվող աշխատանքների ընթացքի և որակի համապատասխանության մշտադիտարկում իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ ամիսը 2 անգամ պարբերականությամբ ներկայացնել տեղեկատվություն՝ յուրաքանչյուր ծրագրի համար աշխատանքային

3. Աշխատանքային խմբի անդամներին՝ յուրաքանչյուրն իր մասով աջակցել խմբի բնականոն գործունեության ապահովմանը, խմբի ղեկավարին գրավոր ներկայացնել սույն որոշման 1-ին կետում նշված աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ նյութերը:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

1/13/2023

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2023թ. հունվարի 13-ի թիվ 08 -Ա որոշման

ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Հախնազարյան Արմեն** – քաղաքաշինության վարչության պետ,
2. **Ասլանյան Խաչիկ** – քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ,
3. **Կոստանյան Արամ** – զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ (խմբի ղեկավար),
4. **Ոսկանյան Սամվել** – մարզպետի օգնական,
5. **Մարտիրոսյան Նարեկ** - ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությունում խորհրդական՝ առանձին գործառույթներ համակարգող, քաղաքացիական աշխատանք իրականացնող: